

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ

◀◀▶▶

### ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

(1909-1910)

Մեծ հետաքրքրութեամբ կը թղթատուի ամբողջ ստուար տետրը: Նա կը բռնվանդակէ խղճմտորէն ու մանրամասնօրէն ինչ որ մարդ կը փափաքի գիտնալ Հայութեան արդի ժամանակներուն այս ամենէն աւելի մեծ ձեռնարկին վրայ: Տեղեկագիր՝ կեդրոնական վարչական ժողովին վրայ և անոր ատենագրութեանց, ղրամագլուխի հաշիւ, եկամտի հաշիւ, ընդհանուր ծախք, նպաստներ, ելմտական ընդհանուր վիճակ, նուիրատուութիւններ կանխորոշ նպատակաւ և առանց կանխորոշ նպատակի, կտակներ, բացառիկ հանգանակութիւններ, կիլիկեան որբանոցի մը ծրագիր, բոլորը բացատրուած ու տրուած է ամէն Հայու ձեռք՝ որ հոն կը տեսնէ իբր իր կեանքին նպատակը՝ բարերարել ազգի մը՝ որ ամենէն աւելի արիւն կորսնցուցեր է իր քաղաքական կեանքին մէջ և որ միշտ կը տառապի իր գոյութեան պահպանութեան համար:

Ու հոս, այս տետրին մէջ, հայը կը տեսնէ որ պարապ չվատնուիր իր աշխատութեանց արդիւնքը, նա իր նպատակին կը հասնի և ամենէն աւելի կը հոգայ կարիքը անոնց ուր վէրքը սաստիկ եղած է ինչպէս այս թշուառ Կիլիկիոյ մէջ:

Հասոյթներու հաշուեցուցակ, յարակից ցուցակ, հաշուեկշիռ և համեմատական ցուցակ զինք այս բանիս կ'ապահովցնեն: Ասոր համար ալ իր մասնաճիւղերը մեծ ծաւալ գտած է բոլոր Հայութեան ըով թէ Սփիւռին և թէ Մայր Հայրենեաց մէջ, ինչպէս կը տեսնուի անոնց ցուցակներէն: Ամէն մարդ իր կարողութեան համեմատ իր բաժինը կը բերէ հասարակաց այս մեծ ղրամարկղին, հազարներով ու լումանեւ ըով, երկուքն ալ հաւասարապէս յարգի, քանի որ բարի սրտէ մը կու գան:

Միութիւնը բոլոր Հայութեան համակրութիւնը վայելած է, թէ ամենէն աւելի բարձր աստիճանաւորներուն առանձնական կոնդակներովն ու նամակներովը և թէ մամուլին հասարակաց գնահատականներովը:

Իր վարչական ամուր կազմը և վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի բարձր հովանաւորութիւնը անժխտելի գրաւական մըն են Միութեան ամենամեծ ծաւալման ու տեւողութեան:

Իւր Եղևանք որ ազգային գրագէտները և մանաւանդ տպարանները հաճութեամբ կը պատասխանեն Միութեան այս նոր կոչին, որով պիտի նպաստեն նաեւ շատ աղքատ դպրոցներու հասարակաց զարգացման ու կրթութեան:

ԻՄԲ.